

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի հունիսի 22-ին

823 «ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»¹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «տվյալ ժամանակահատվածի առաջին ամսվա ընթացքում,» բառերից հետո լրացնել «իսկ տվյալ տեսակի գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ տվյալ ամսվա ընթացքում,» բառերով:

2) 2-րդ մասը «տվյալ ժամանակահատվածի առաջին ամսվա ընթացքում,» բառերից հետո լրացնել «իսկ տվյալ տեսակի գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատերերը՝ տվյալ ամսվա ընթացքում,» բառերով:

3) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ընդ որում, «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին»² Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ՀՎՀՀ տրամադրելու օրվա ընթացքում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ով սահմանված ձևի արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված ՀՎՀՀ տրամադրելու օրը, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում:»:

4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ընդ որում, դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 6-ով սահմանված ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատերերի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը որոշվում է դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար սույն կետով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային վճարի և դիմում-հայտարարությամբ ներկայացված՝ տվյալ տարվա մնացած ամբողջական ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ կամ 9 ամիս) համար սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային վճարի հանրագումարի չափով:

Դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է արտոնագրային վճարի եռամսյակային չափի մեկ երրորդի և դիմում-հայտարարությունը ներկայացնելու ամսաթիվը ներառող ամսվանից մինչև տվյալ եռամսյակի ավարտը ներառող ամբողջական ամիսների թվի արտադրյալով: *Դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող ամիսն ընդունվում է որպես ամբողջական ամիս՝ անկախ դիմում-հայտարարությունը ներկայացնելու ամսաթվից:*»:

1. ՀՀՊՏ 2010 N 69 (803), 29.12.10
2. ՀՀՊՏ 2007 N 54 (578), 07.11.07

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի համար սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով: Ընդ որում, սույն մասով սահմանված տուգանքի հաշվարկման համար սույն օրենքի N 8 հավելվածի 14-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված գործակիցները հաշվի չեն առնվում:

Սույն օրենքի N 8 հավելվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան՝ բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված սրահի համար ստացված արտոնագրերում չնշված որևէ օրվա ընթացքում գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից արտոնագրում չնշված յուրաքանչյուր օրվա համար գանձվում է արտոնագրային վճար՝ սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով մեկամսյա ժամանակահատվածի համար տվյալ վայրի մասով հաշվարկված արտոնագրային վճարի չափով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկված տուգանքները պետական բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:»:

Հոդված 4. Օրենքի՝

1) N 1, N 3 և N 5 հավելվածներում՝

ա. 1.1-ին տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում»,

բ. 1.7-րդ տողերը «համակարգչային տեխնիկայի» բառերից հետո լրացնել «, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի» բառերով.

2) N 1 հավելվածով հաստատված ցանկի 6-րդ և N 2 հավելվածով հաստատված ցանկի 7-րդ սյունակներից հանել «հեռավոր և» բառերը:

Հոդված 5. Օրենքի N 8 հավելվածում՝

1) 5-րդ կետի՝

ա. առաջին պարբերությունում «(եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա)» բառերը փոխարինել «(տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան տասներկուամսյա ժամանակահատվածը)» բառերով,

բ. երկրորդ պարբերությունից հանել «եռամսյա, վեցամսյա, իննամսյա կամ տասներկուամսյա» բառերը,

գ. լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությունով.

«Այն դեպքերում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների համար նախատեսված՝ երևան քաղաքում և մարզկենտրոններում 300 մ² և ավելի, այլ քաղաքներում և այլ վայրերում 200 մ² և ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մ² և ավելի մակերես ունեցող սրահներում, այդ սրահի մասով արտոնագիր տրամադրվում է սույն հավելվածով սահմանված կարգով՝ տվյալ տարվա որևէ ամսվա կոնկրետ օրվա կամ օրերի համար: Ընդ որում, սույն պարբերությամբ նախատեսված կարգով արտոնագիր ստանալու համար արտոնագրային վճար վճարող համարելու

մասին հայտարարությունը կարող է ներկայացվել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի նախընտրած՝ արտոնագրային վճար վճարող համարվելու որևէ օրվան կամ օրերին նախորդող ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում:».

2) 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում:».

3) 7-րդ և 8-րդ կետերից հանել «(եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա)» բառերը.

4) 9-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Գործունեության տեսակը	Ելակետային տվյալը	Արտոնագրային վճարի ամսական դրույթաչափը 1 միավորի (դրամ)				այլ վայրերում	այլ քաղաքներում	Երևան քաղաքում	մարզկենտրոններում	այլ քաղաքներում	այլ վայրերում	սահմանափակում
		Երևան քաղաքում										
հանրային սննդի ոլորտում հրակամացվող գործունեություն	տարածք, մինչև 20 մ ² ներառյալ	30000	21000	21000	21000	10500	5250					
	տարածք, 20-ից մինչև 50 մ ² ներառյալ	30000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	21000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500	21000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500	21000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500	10500 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 5250	5250 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 2625					
	տարածք, 50 մ ² ավելի՝ մինչև 300 մ ² ներառյալ	75000 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 21000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000	13125 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 7500					
հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեություն	տարածք, 300 մ ² ավելի՝ մինչև 500 մ ² ներառյալ	600000 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 12000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000	200625 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 4000					
	տարածք, 500 մ ² մակերեսից ավելի	840000 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 6000	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500	587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500	280625 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 1750					
	տարածք	750	420	420	420	210	105					
վարսավորական ծառայությունների մատուցման գործունեություն	մեքենայի քամակ	9500	5600	5600	5600	2800	1400					
	աշխատատեղ	15000	12000	12000	12000	4500	2250					

ավտոտեխպասարկման կայանների (կետերի) գործունեություն	աշխատատեղ	15000	12000	12000	6000	3000
ավտոկանգարանների գործունեություն	տարածք	600	120	120	60	30
բիլիարդ խաղի կազմակերպում	խաղամեղաց	40000	20000	20000	10000	5000

5) 10-րդ կետի «եռամսյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով.

6) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Այն դեպքում, երբ բնակության միևնույն հասցեում գրանցված (հաշվառված) անհատ ձեռնարկատերերը, նրանց անուսիները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը միևնույն թեթև մարդատար մեքենայով իրականացնում են ուղևորափոխադրում, կարող են ստանալ անհատ ձեռնարկատերի անվամբ միայն մեկ արտոնագիր: Ընդ որում, այս դեպքում արտոնագրային վճարի սահմանական դրույքաչափը սահմանվում է սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված դրույքաչափին ավելացրած յուրաքանչյուր վարորդի համար 1000 դրամ:».

7) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Սույն հավելվածի 5-րդ կետով նշված որևէ ժամանակահատվածում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է արտոնագրային վճարի մեկամսյա չափի, գործունեության տվյալ տեսակի համար տվյալ արտոնագրում նշված ժամանակահատվածում ներառված ամիսների քանակի և սույն հավելվածի 14-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:

Անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված՝ Երևան քաղաքում և մարզկենտրոններում 300 մ² և ավելի, այլ քաղաքներում և այլ վայրերում 200 մ² և ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մ² և ավելի մակերես ունեցող սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքերում որևէ ամսվա օրվա կամ օրերի համար արտոնագրային վճարի չափը սահմանվում է արտոնագրային վճարի մեկամսյա չափի մեկ երեսուներորդի և գործունեության տվյալ տեսակի համար տվյալ արտոնագրում նշված օրերի քանակի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:».

8) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«6) բացառապես գիշերային ժամերին (ժամը 21:00-ից մինչև ժամը 09:00-ն) աշխատող ավտոկանգառների գործունեության համար՝ լրացուցիչ 0,5.

7) մեկամսյա ժամանակահատվածի համար՝ 1,0: Մեկ ամսից ավելի ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս սույն կետով սահմանված գործակիցը նվազեցվում է 0,02-ով՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությամբ ներկայացված մեկից ավելի յուրաքանչյուր ամսվա համար:».

9) 19-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Ընդ որում, սույն հավելվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձանց համար թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու ժամանակահատվածը համարվում է ապահովագրական ստաժ միայն նրանց կողմից «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին»³ Հայաստանի Հանրապետության օրենքով անհատ ձեռնարկատերերի համար սահմանված ամսական նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարելու դեպքում (հաշվի առնելով թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու ժամանակահատվածը), որն արտոնագիրն ստանալիս անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձանց կողմից կարող է վճարվել իրենց հայեցողությամբ, և որը թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու ժամանակահատվածի համար հանդիսանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձանց համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորության վերջնական գումար:».

10) N 1 ձևով սահմանված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարության 4-րդ տողից հանել «(եռամսյա, վեցամսյա, իննամսյա կամ տասներկուամսյա)» բառերը.

11) N 2 ձևով սահմանված արտոնագրի ձևում վերջին աղյուսակից հետո լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ.

«Օրենքի N 8 հավելվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում անհատ ձեռնարկատերերի հաշվառման հասցեում հաշվառված այլ անձանց տվյալները, որոնց համար վճարվում է արտոնագրային վճար.

Որպես վարորդ հաշվառված ֆիզիկական անձի անունը, ազգանունը	Հաշվառման հասցեն՝ համաձայն անձնագրի»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունիսի 1-ից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նախկինում ստացված արտոնագրերի համար վճարված արտոնագրային վճարների գումարների վերահաշվարկներ չեն կատարվում:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան

2012 թ. հունիսի 30
Երևան
ՀՕ-166-Ն